

ՌՌԻՍԱՍՏԱՆԸ, ԵՍՍՊ-Ը ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Մերգեյ Մինասյան

Հողվածն անդրադառնում է Եվրոպայում սովորական սպառազինությունների մասին պայմանագրի (ԵՍՍՊ) դրույթների իրականացումը Ռուսաստանի կողմից դադարեցնելու շուրջ ստեղծված իրավիճակին, ինչպես նաև Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության ու ռազմաքաղաքական գործընթացների վրա Մոսկվայի այս քայլի ազդեցությանը: Վերլուծվում են Հարավային Կովկասի նկատմամբ ԵՍՍՊ կիրառման դինամիկան և հիմնական բաղադրիչները, այդ պայմանագրի կայունացնող դերը լարվածության թուլացման, վստահության հաստատման և սպառազինությունների մրցավազքի սահմանափակման համատեքստում: Որոշ կանխատեսումներ են արվում Հարավային Կովկասում անվտանգության և սպառազինությունների նկատմամբ վերահսկողության ոլորտում հնարավոր քաղաքական գործընթացների մասին, եթե ՌԴ-ն վերջնականապես որոշի դուրս գալ ԵՍՍՊ-ից:

Ներածություն

2007թ. հուլիսի 14-ին ՌԴ նախագահ Վ.Պուտինը ստորագրեց հրաման Ռուսաստանի կողմից Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագրի (*DOBCE*) դրույթների և դրա հետ կապված որոշ համաձայնագրերի ու արձանագրությունների կատարումը դադարեցնելու մասին: Ռուսական կողմի հայտարարությունների համաձայն՝ պաշտոնապես Մոսկվայի նման գործողությունների հիմնական պայմանն այն էր, որ ԵՍՍՊ մասնակից երկրների մեծ մասը շարունակում էր հրաժարվել ԵՍՍՊ նոր՝ ադապտացված տարբերակը (ստորագրվել է 1999թ. նոյեմբերի 19-ին Ստամբուլում) վավերացնելուց, ինչն իբր Ռուսաստանին անշահավետ վիճակում էր դնում վերջինիս արևմտյան գործընկերների համեմատ՝ ՆԱՏՕ ընդլայնումից և նրա կազմում նոր երկրների անդամագրվելուց հետո: Սակայն, շատ փորձագետների կարծիքով, պայմանագրի դրույթների կատարումը դադարեցնելու ռուսական կողմի հայտարարությունը հարկ է բացատրել ոչ միայն ադապտացված ԵՍՍՊ-ը վավերացնելու պահանջը բավարարելու Ռուսաստանի ցանկությամբ, այլև այլ, առավել գլոբալ բնույթի քաղաքական պատճառներով (արևմտյան երկրների հետ Մոսկվայի հարաբերությունների ընդհանուր

վատթարացմամբ, ինչպես նաև Արևելյան Եվրոպայում ԱՄՆ ՀՀՊ նոր համակարգի ծավալման գործողություններին ինքնատիպ պատասխանով):

Վ.Պուտինի հրամանի համաձայն՝ արդեն 2007թ. դեկտեմբերի 13-ից Ռուսաստանն սկսելու է ԵՄՄՊ դրույթների (մասնավորապես՝ ռազմական տեղեկատվության փոխանակման, միջազգային հրահանգիչների գործողումների թույլատրման մասին և այլն) կատարման մոտատրիումը և մյուս մասնակից պետություններին տալիս է ևս 150 օր՝ մինչև 2008թ. հուլիսի 1-ը (պայմանագրի XIX հոդվածի համապատասխան)՝ ադապտացված ԵՄՄՊ լիակատար վավերացման համար:

1. ԵՄՄՊ և ադապտացված ԵՄՄՊ

Ինչպես հայտնի է, 1990թ. նոյեմբերի 19-ին, Փարիզում, Վարշավայի պայմանագրի կազմակերպության և ՆԱՏՕ-ի մեջ մտնող 22 երկրներ ստորագրեցին ԵՄՄ մասին պայմանագիրը, որն ուժի մեջ մտավ 1992թ. նոյեմբերին: Պայմանագրով նախատեսվում էր Եվրոպայում (Ատլանտիկայից մինչև Ուրալ) քանակապես սահմանափակել հինգ հիմնական կարգերի սովորական սպառազինությունները և ռազմական տեխնիկան. տանկեր, մարտական զրահապատ մեքենաներ (*BBM*), 100մմ-ից սկսած տրամաչափով հրետանի, մարտական ինքնաթիռներ և հարվածային ուղղաթիռներ: Սահմանված չափը գերազանցող սպառազինությունները, պայմանագրի ուժի մեջ մտնելուց սկսած 40 ամսվա ընթացքում, պետք է վերածվեին թափոնի: Սպառազինությունների կուտակումից խուսափելու և թշնամական որևէ բլոկի կողմից հանկարծակի հարձակումը բացառելու նպատակով, ըստ պայմանագրի դրույթների, սահմանափակվեց տանկերի, զրահամեքենաների և հրետանային համակարգերի թվաքանակը չորս գոտիներում՝ Կենտրոնական Եվրոպայում, ընդլայնված Կենտրոնական Եվրոպայում, թիկունքային տարածքում: Որպես ԵՄՄՊ կիրառման առանձին գոտիներ հյուսիսում և հարավում առանձնացվեցին թևային շրջանները (Բուլղարիա, Ռումինիա, ԽՍՀՄ Անդրկովկասյան, Լենինգրադյան, Հյուսիսկովկասյան, Օդեսայի ռազմական օկրուգներ՝ Վարշավայի պայմանագրի կազմակերպության համար, Հունաստան, Իսլանդիա, Նորվեգիա և Թուրքիա՝ ՆԱՏՕ-ի համար):

ԽՍՀՄ փլուզումից հետո անհրաժեշտ էր սպառազինությունների խորհրդային սահմանաչափը բաժանել նորանկախ պետությունների միջև, ինչն իրականացվեց 1992թ. մայիսի 15-ին Տաշքենդում կայացած ԱՊՀ գագաթաժողովում: ԽՍՀՄ փլուզումը, Վարշավայի պայմանագրի կազմակերպության, Եվրոպայում բլոկների դիմակայության վերացումը և ՆԱՏՕ-ին արևելաեվրոպական երկրների անդամագրվելը անհրաժեշտ դարձրին ԵՄՄՊ հիմնական դրույթների վերանայումը: Վարշավայի պայմանագրի

կազմակերպության նախկին անդամները 1999թ. մարտին մտան ՆԱՏՕ տանկերի, զրահամեքենաների, հրետանու, մարտական ինքնաթիռների ու հարվածային ուղղաթիռների իրենց չափաբաժնով, իսկ ըստ պայմանագրի, փաստորեն, շարունակում էին գործել հաշվեկշռված բլոկային սահմանափակումներ: Բացի այդ, Ռուսաստանն առանձնապես դժգոհ էր «հին» պայմանագրում առկա, այսպես կոչված, թևային սահմանափակումներից, որոնցով կրճատվում էր Հյուսիսային Կովկասում և երկրի հյուսիս-արևմուտքում (Լենինգրադյան զինվորական օկրուգ) նրա զինված ուժերի սպառազինությունների ու ռազմական տեխնիկայի քանակը, ՆԱՏՕ մտած մի շարք երկրների (որոնք չմիացան ԵՍՍՊ-ին՝ Սլովենիա և մերձբալթյան պետություններ) տարածքներում «գորշ գոտիների» ստեղծումից և պայմանագրի մի շարք այլ դրույթներից [1]:

1999թ. նոյեմբերի 19-ին Ստամբուլում կայացած ԵԱՀԿ գագաթաժողովում ստորագրվեց ԵՍՍՊ թարմացման մասին համաձայնագիրը, որը պետք է հաշվի առնել պայմանագրի գործողության շրջանակներում ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրողությունները: Նորացված պայմանագրում սահմանափակումներն արդեն մտցվում էին ոչ թե ռազմական դաշինքների, այլ առանձին երկրների համար: Յուրաքանչյուր եվրոպական մասնակից երկրի համար ամրագրվեցին ազգային և տարածքային սահմանային մակարդակներ (ԱՄՄ և ՏՄՄ): ԱՄՄ-ն սահմանափակում է պայմանագրով նախատեսված սպառազինությունների բոլոր տեսակները, որոնք պատկանում են կոնկրետ երկրի, իսկ ՏՄՄ-ն՝ սեփական և օտարերկրյա տանկերի, *BBM-ի* և հրետանու քանակությունը տվյալ երկրի տարածքում:

Սակայն ներկայումս նորացված ԵՍՍՊ-ն վավերացրել են միայն Ռուսաստանը, Բելառուսը, Ղազախստանը և Ուկրաինան: Արևմտյան երկրները հրաժարվում են վավերացնել պայմանագիրն այն պատրվակով, թե Ռուսաստանը չի կատարում ԵԱՀԿ ստամբուլյան գագաթաժողովում ստանձնած քաղաքական պարտավորությունները Վրաստանից և Մոլդովայից իր ռազմակայանները դուրս բերելու վերաբերյալ [2, c. 111-114]: Մոսկվայի պատասխանն այն է, որ այդ պարտավորությունները կատարված են լրիվ ծավալով, և Վրաստանից ռուսական ռազմակայանների դուրսբերման ժամկետներն ու պայմանները և Մերձդնեստրից ռազմական ունեցվածքի դուրսբերումը երկկողմանի բնույթ են կրում ու չեն կարող խոչընդոտ հանդիսանալ այլ երկրների կողմից ԵՍՍՊ նորացված պայմանագրի վավերացման համար [3]:

Միևնույն ժամանակ, որոշ փորձագետներ համոզված են, որ Ռուսաստանի կողմից պայմանագրի դրույթների իրականացման դադարեցման իրական պատճառը գտնվում է արևմտյան երկրների հետ փոխհարաբերու-

թյունների ընդհանուր վատթարացման քաղաքական համատեքստում, և որ Ռուսաստանի ու ՆԱՏՕ երկրների համար «վիրտուալ» սահմանաչափերը (և հատկապես ներկայումս կողմերի ունեցած սպառազինությունների ու ռազմական տեխնիկայի քանակությունը) ԵՄՍՊ գծով՝ ամենևին էլ իրական ռազմական սպառնալիք չեն ներկայացնում Ռուսաստանի անվտանգության առումով [4]:

2. ԵՄՍՊ դրույթների կիրարկումը Հարավային Կովկասում

1992թ. մայիսի 15-ին Տաշքենդում ստորագրված համաձայնագրերի համապատասխան՝ Ռուսաստանը և Հարավային Կովկասի երեք պետությունները՝ Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը, պայմանավորվածություն ձեռք բերեցին տարածաշրջանում սպառազինությունների և ռազմական տեխնիկայի առավելագույն թույլատրված մակարդակի մասին՝ իրար մեջ բաժանելով կոկվասյան տարածաշրջանում նախկին ԽՍՀՄ ունեցած սահմանաչափերը (տե՛ս *Աղյուսակ 1*): 1999թ. ԵԱՀԿ Ստամբուլի գազաթաժողովում հարավկովկասյան պետությունները ստորագրեցին նաև Եվրոպայում սովորական սպառազինությունների մասին նորացված պայմանագիրը, որով ճշգրտումներ էին նախատեսվում, այսպես կոչված, թևային սպառազինությունների գծով, սակայն վերոնշյալ պատճառներով այն ուժի մեջ չմտավ և չի վավերացվել հարավկովկասյան ոչ մի երկրի կողմից:

Աղյուսակ 1

Ըստ ԵՄՍՊ-ի՝ սպառազինությունների ազգային և տարածքային սահմանային մակարդակները Հարավային Կովկասի պետությունների համար

Երկիրը	Մարտական տանկեր	ԵԵՄ	Հրետանային համակարգեր	Մարտական ինքնաթիռներ	Հարվածային ուղղաթիռներ	Զինվորական անձնակազմը՝
Ադրբեջան	220	220	285	100	50	70 000
Հայաստան	220	220	285	100	50	60 000
Վրաստան	220	220	285	100	50	40 000

*Պայմանագրի մասնակից երկրների զինված ուժերի անձնակազմի թվաքանակը սահմանափակվում է Եվրոպայում սովորական զինված ուժերի անձնակազմի թվաքանակի մասին լրացուցիչ Ամփոփիչ ակտի (այսպես կոչված՝ ԵՄՍՊ-1Ա) դրույթներով:

Հարավկովկասյան երկրների կողմից ԵՄՍՊ դրույթների կատարման կարգը վերջին 15 տարիներին միանգամայն տարբեր է եղել: Վրաստանը և Հայաստանը, ընդհանուր առմամբ, չեն խախտել դրանք: Ավելին, օրինակ՝ Ղարաբաղյան հակամարտության մարտական գործողությունների փուլում Հայաստանում, ԵՄՍՊ շրջանակներում, անցկացվել են միջազգային տես-

չական ստուգումներ, որոնց արդյունքում արձանագրվել է, որ Հայաստանի կողմից պայմանագրի գծով միջազգային պարտավորությունների խախտումներ չեն եղել [5, c. 239]:

Մյուս կողմից՝ ադրբեջանցի փորձագետները և պաշտոնական ադրբյուրները պնդում են, որ դա կապված է այն բանի հետ, որ Հայաստանն իբր իր զինված ուժերի սպառազինությունների և ռազմական տեխնիկայի մեծ մասը պահում է Լեռնային Ղարաբաղի տարածքում: Սակայն այս պարագայում մենք հանդիպում ենք արմատապես այլ իրավիճակի, որը որևէ կերպ կապված չէ Հայաստանի՝ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման հետ: Լեռնային Ղարաբաղի տարածքում գտնվող սպառազինությունները և ռազմական տեխնիկան պատկանում են ոչ թե Հայաստանի զինված ուժերին, այլ միջազգային հանրության կողմից չճանաչված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բանակին: Ընդ որում՝ այդ սպառազինության մեծ մասը դարաբաղյան կողմը ձեռք է բերել դեռևս 1991-1994թթ., Ադրբեջանի դեմ մարտական գործողությունների արդյունքում: Բացի ադրբեջանական բանակից որպես ռազմավար դարաբաղյան ջոկատների ձեռք բերած զենքից ու ռազմական տեխնիկայից¹, ԼՂՀ-ին են անցել նաև նախկին խորհրդային բանակի Ստեփանակերտում տեղակայված 366-րդ մոտոհրաձգային գնդի հաստիքային զենքն ու ռազմական տեխնիկան: Պաշտոնական տվյալների համաձայն՝ 1990թ. նոյեմբերի 19-ի դրությամբ 366-րդ մոտոհրաձգային զունդն ուներ 13 հատ *T-72* տանկ, 120 հատ *BBM* և 16 հրետանային համակարգ²: Այս քանակությունից, ըստ Ռուսաստանի Պաշտպանության նախարարության պաշտոնական տվյալների, գնդի զինվորական անձնակազմն ուղղաթիռներով դուրս բերելուց հետո, դարաբաղյան կողմին է թողնվել 9 տանկ և 87 *BBM* (5 *BTP-70*, 49 *BMII-1*, 28 *BMII-2* և 5 *BPM-1K*), որոնք տեխնիկապես վատ վիճակում էին գտնվում: Գնդի մնացած զինտեխնիկան պարզապես ոչնչացվել է ռուս զինծառայողների կողմից: Ուստիև, միջազգային հանրության կողմից ԼՂՀ-ն իրավաբանորեն չճանաչելու փաստը հիմնախնդիրներ է ստեղծում ԵՄՄՊ դրույթները նրա զինված ուժերի սպառազինությունների և ռազմական տեխնիկայի վրա տարածելու տեսակետից:

¹ Մասնավորապես, բրիտանացի լրագրող Թ. դե Վալին տված հարցազրույցում այն ժամանակ շշ պաշտպանության նախարար Ս.Սարգսյանը հայտարարել է, որ 1992-1994թթ. մարտական գործողությունների ընթացքում դարաբաղյան գորքերն ադրբեջանական բանակից զավթել են 156 տանկ (տե՛ս *de Vaal T., Черный сад: Армения и Азербайджан между миром и войной. М., 2005, с. 408*): Բացի այդ, Հայաստանի Հանրապետության զինված ուժերը մարտական ընդհարումների ընթացքում Ադրբեջանի սահմանին վերցրել են ևս 8 հատ *T-54/55* տանկ, որոնք նորոգվել են և այժմ պատկանում են հայկական բանակին (տե՛ս CFE Joint Consultative Group Documents - JCG.DEL/29/01, 30.10.2001; JCG.DEL/30/01, 06.11.2001; JCG.DEL/32/01, 13.11.2001.

² Ըստ տեղեկատվության փոխանակման շրջանակներում նախկին ԽՍՀՄ տրամադրած տվյալների, ինչը նախատեսված էր 1990թ. ստորագրված ԵՄՄՊ-ով:

Սակայն Ադրբեջանի պարագայում ԵՍՄՊ գործունեության ամբողջ ընթացքում ակնհայտ խախտումներ են տեղի ունեցել: Մասնավորապես, Լեռնային Ղարաբաղում մարտական գործողությունների ավարտից հետո և մինչև 1990-ական թթ. կեսերը Ադրբեջանի տանկերի, *ББМ-երի* և հրետանային համակարգերի հայտարարված քանակությունը քանիցս գերազանցում էր առավելագույն թույլատրված չափերը (հավանաբար, Ադրբեջանի ԱԳՆ պաշտոնյաները «չիմացության» պատճառով ներկայացնում էին իրենց տնօրինած սպառազինությունների իրական թվերը): Վերջին տարիներին արդեն Բաքուն հայտարարում էր սպառազինությունների ճիշտ այնքան քանակության մասին, որքան թույլատրված էր ունենալ Սովորական սպառազինությունների ազգային սահմանային մակարդակի մասին արձանագրության համաձայն, ընդ որում՝ դա անելով ռազմական տեխնիկայի առանց որևէ կրճատման: Այսպիսով, կան բոլոր հիմքերը պնդելու, որ Ադրբեջանն իրականում զգալիորեն գերազանցում է Պայմանագրով սահմանափակվող սպառազինությունների և տեխնիկայի (*ОДВТ*) քանակությունը [6]: Բացի այդ, վերջին տարիներին այդ երկիրը սպառազինությունների և ռազմական տեխնիկայի նոր միավորների մեծ քանակություն է գնել (տե՛ս *Աղյուսակ 2, 3*), ինչը նույնպես գրեթե չի ազդել Ադրբեջանի ներկայացրած տվյալների վրա [7]:

Աղյուսակ 2

2004-2006թթ. Ադրբեջանի ներմուծած սպառազինությունները՝ կոնվենցիոնալ սպառազինությունների գծով ՄԱԿ ռեզիստրի համաձայն

Կարգը	Արտահանող երկիրը	Սպառազինության տեսակը	Քանակությունը
ԲԴ <i>Ընդամենը</i>	Բելառուս Ուկրաինա	T-72 T-72	60 45 105
ԲԲՄ <i>Ընդամենը</i>	Ուկրաինա	БТР-3У/12,7 БМП-1	3 2 5
Հրետանային համակարգեր <i>Ընդամենը</i>	Ուկրաինա	300մմ РСЗО 9А52 «Смерч» 120մմ ականանետ ПМ-38	12 85 97
Մարտական ինքնաթիռներ <i>Ընդամենը</i>	Ուկրաինա Վրաստան	МиГ-29 Л-39 Су-25	5՝ 12 7 24

՝Ադրբեջանի և Ուկրաինայի՝ 2006թ. ՄԱԿ ռեզիստրին ներկայացրած հաշվետվությունում նշվում է 5 հատ *МиГ-29* ինքնաթիռների մատակարարման մասին: Ուկրաինական ՁԼՄ այլ տեղեկությունների համաձայն՝ Ուկրաինայից ստացված *МиГ-29* կործանիչների ընդհանուր թիվը 14 է, որոնցից 2-ը *МиГ-29УБ* տեսակի ուսումնամարտական ինքնաթիռներ են, ինչը, սակայն, նշված չէ 2006թ. ՄԱԿ ռեզիստրի տվյալներում: Հնարավոր է, որ դրանց մասին հիշատակվի 2007թ. տվյալներում (տե՛ս *Зубириов Н., Чем занимается украинский ОПК // Инвестгазета, 19.02.2007*).

Աղյուսակ 3

Ադրբեջանի սպառազինությունների թվաքանակը ԵՄՍՊ գծով ներկայացված պաշտոնական տվյալների համաձայն

Թ.	Մարտական տանկեր	ԵԵՄ	Հրետանային համակարգեր	Մարտական ինքնաթիռներ	Հարվածային ուղղաթիռներ
2004	220	210	285	54	15
2005	214	185	285	54	15
2006	217	183	260	62	15
2007	261	183	343	64	15

Մի քանի տարի շարունակ Ադրբեջանը փորձում էր (ի դեպ՝ անհաջող), շրջանցելով ԵՄՍՊ դրույթները, հասնել իր սպառազինությունների սահմանաչափի ավելացման, ինչպես նաև դրանով հիմնավորել պայմանագրով առավելագույն թույլատրված մակարդակը գերազանցելու փաստերը: Օրինակ՝ պատճառաբանելով, որ Ադրբեջանի բնակչության թիվը և տարածքը զգալիորեն գերազանցում են ԵՄՍՊ անդամ «փոքր պետությունների» համանման ցուցանիշները, իսկ այդ ցուցանիշները կարևորագույնն էին ցամաքային զինատեսակների (տանկեր, ԵԵՄ և հրետանային համակարգեր) սահմանային մակարդակը սահմանելիս, ադրբեջանցիները նշում էին, որ իրենց այդ զինատեսակների համար սահմանված չափերը պետք է զգալիորեն ավելացվեն¹: Ինչպես նշում են իրենք՝ ադրբեջանցի հետազոտողները, «քանի որ այդ համաձայնագիրը (ԵՄՍՊ-ը– Մ.Մ.) Ադրբեջանի զինառայողների, սպառազինությունների և ռազմական տեխնիկայի առավելագույն քանակության խիստ սահմանափակումներ է սահմանում, երկիրը ստիպված է թաքցնել իրական թվերը» [8, c. 69]: Ադրբեջանը սա կապում է ԼՂՀ-ին հարակից շրջաններում տեղակայված իր բանակային ստորաբաժանումների սպառազինության մասին տեղեկատվություն տրամադրելու իբր անհնարինության հետ [9, pp. 34-36]: Բացի այդ, որպեսզի Ադրբեջանի կանոնավոր զորքերում ԵԵՄ քանակությունը համապատասխանի նրա ԱՄՄ-ին, դրանց զգալի մասը (գրեթե 200 միավոր) հանձնվեց երկրի ներքին և սահմանապահ զորքերին, թեև Հարավային Կովկասի երկրների համար ԵԵՄ առավելագույն թույլատրված քանակությունը ներքին անվտանգության կառույցներում սահմանափակվում էր 135 միավորով:

Իհարկե, պետք է խոստովանել, որ ոչ «հիմնական» ԵՄՍՊ-ը, ոչ նրա նորացված տարբերակը Հարավային Կովկասում սպառազինությունների նկատմամբ վերահսկողության իրական և գործուն մեխանիզմներ չունեն, ինչն Ադրբեջանին, որը հանդես է գալիս տարածաշրջանի ռազմականաց-

¹ Ադրբեջանցի փորձագետների բերած, այսպես կոչված, ցամաքային միավոր զինատեսակների (տանկ, ԵԵՄ) միջինացված գործակցի կիրառմամբ 1000կմ² (տարածքային հատկանիշ) կամ 1 մլն մարդ (ժողովրդագրական հատկանիշ) հաշվարկով ստացվում էր, որ ԵՄՍՊ գծով Ադրբեջանի համար սպառազինությունների սահմանային մակարդակները պետք է մեծացվեն մինչև 727 տանկ և 1030 ԵԵՄ (ըստ տարածքային հատկանիշի) կամ 607 տանկ և 870 ԵԵՄ (ըստ ժողովրդագրական հատկանիշի): Մանրամասն տե՛ս *Aliyev Y., Arms Control Process in Transcaucasia // Polar Quarterly, Vol.1, Issue 2, Summer 2004, pp. 45-46.*

ման գլխավոր նախաձեռնողի դերում, դրա դրույթները շրջանցելու լայն հնարավորություններ է տալիս (ընդհուպ մինչև մարտական տեխնիկան իր մշտական տեղադրավայրից պարզապես լեռները փախցնելը՝ միջազգային զինվորական տեսուչների ժամանումից մի քանի ժամ առաջ և այլն): «Մառը պատերազմի» այս իրավաբանական վերապրուկը պարզապես անընդունակ գտնվեց իր գործադրման գոտում՝ Եվրոպայում, ինչպես նաև սառեցված հակամարտությունների գոտիներում ու հետխորհրդային տարածքի չճանաչված պետություններում անվտանգության տարածաշրջանային և ենթատարածաշրջանային համակարգերում կիրառվելու համար: Մյուս կողմից՝ առաջատար արևմտյան երկրների և Ռուսաստանի միջև առկա քաղաքական հիմնախնդիրները ևս այս փաստաթուղթն անգործունակ դարձրին գլոբալ քաղաքական գործընթացներում: Հարավային Կովկասի առանձնահատկությունը, երեք չճանաչված պետությունների առկայությունը և նրանց ու նախկին «մետրոպոլիսների» միջև անվտանգության ոլորտում իրական շփումների բացակայությունը լուրջ հիմնախնդիրներ են ստեղծում ԵՄՍՊ մեխանիզմների կիրառման համար (քանի որ դա ոչ մի կերպ չի շաղկապվում դեռևս «երկբյուկ» Եվրոպայի պայմաններում 1990թ. կնքված այդ պայմանագրի դրույթների հետ) Ղարաբաղյան կամ էլ, ասենք, վրաց-աբխազական հակամարտությունների գոտիներում¹: Այնուամենայ-

¹ ԵՄՍՊ կիրառման պատմությանը հայտնի է սպառազինությունների նկատմամբ վերահսկողության ռեժիմների ներդրման և իրականացման ԵՄՍՊ-ին բավական նման դեպք՝ մշակված նաև ԵԱՀԿ հովանու ներքո: Օրինակ Բոսնիայում և Հերցեգովինայում խաղաղության մասին 1995թ. ընդհանուր շրջանակային համաձայնագրի (Դեյթոնյան համաձայնագիր) 1B հավելվածը լիազորում էր ԵԱՀԿ-ին սպառազինությունների ենթատարածաշրջանային և տարածաշրջանային վերահսկողություն սահմանել Բոսնիայում և Հերցեգովինայում: 1996թ. հունվարին ԵԱՀԿ հովանու ներքո կնքվեց համաձայնագիր Բոսնիայում և Հերցեգովինայում վստահության ու անվտանգության մասին: 6 ամիս անց կնքվեց սպառազինությունների ենթատարածաշրջանային վերահսկողության վերաբերյալ Ֆլորենցիայի համաձայնագիրը Բոսնիայում և Հերցեգովինայում հակամարտող երեք կողմերի միջև, ինչպես նաև Խորվաթիայի ու Հարավսլավիայի Մոցիլախտական (հետագայում Դաշնային) Հանրապետության (Մերքիա և Չեռնոգորիա) կողմից: Համաձայնագիրը սահմանում էր տվորական սպառազինությունների 5 տեսակների (տանկեր, *BEM*, 75մմ և ավելի տրամաչափի հրետանի, մարտական ինքնաթիռներ և հարվածային ուղղաթիռներ - գրեթե այնպես, ինչպես ԵՄՍՊ-ում) առավելագույն թույլատրված մակարդակները: Համաձայնագրի գործողության սահմանված ժամկետի ավարտին (մինչև 1997թ. հոկտեմբերի 31-ը) կողմերը կրճատեցին սահմանված սպառազինությունների մոտ 6600 միավոր: Եվրոպացի մասնագետները երկու համաձայնագրերն էլ միանգամայն հաջողված համարեցին: Հարկ է նշել Ֆլորենցիայի համաձայնագրի նախկին Հարավսլավիայի պայմաններում հաջող կերպով փորձարկված երկու կարևոր տարրի մասին: Լախա մինչև վերջերս որպես սպառազինությունների վերահսկողության վերաբերյալ համաձայնագրերի մասնակիցներ սովորաբար հանդես էին գալիս միջազգային իրավունքի լիիրավ տույնեկտները պետությունները: Սակայն վերջին ժամանակներս պետական-քաղաքական կազմավորումները, որոնք իրենց միջազգային իրավական կարգավիճակով ցածր են պետություններից, նույնպես դարձան սպառազինությունների վերահսկման մի շարք տարածաշրջանային համաձայնագրերի մասնակիցներ: Ընդ որում՝ այդ համաձայնագրերը կարող են լինել ինչպես երկկողմանի (միայն երկու կողմերի մասնակցությամբ, որոնցից մեկը կարող է չլինել միջազգայնորեն ճանաչված պետություն), այնպես էլ բազմակողմ (ինչպես պետությունների, այնպես էլ չճանաչված պետական կազմավորումների մասնակցությամբ): Այս առումով սպառազինությունների ենթատարածաշրջանային վերահսկման մասին Ֆլորենցիայի համաձայնագիրը հատկանշական է նրանով, որ ներառում է Բոսնիայի և Հերցեգովինայի Դաշնությունը (բաղկացած երկու կազմավորումներից՝ խորվաթների ու բոսնիացի մուսուլմանների) և Մերքիայի Հանրապետությունը որպես Բոսնիա և Հերցեգովինայի պետության առանձին մասեր, ինչպես նաև երկու հարևան պետություններ՝ Խորվաթիան և Հարավսլավիայի Դաշնային Հանրապետությունը (Մերքիա և Չեռնոգորիա): Երկրորդ ի տարբերություն սպառազինությունների վերահսկման և ռազմական անվտանգության Եվրոպայում առկա բոլոր ռեժիմների Ֆլորենցիայի համաձայնագրի ստորագրման, և որ գլխավորն է իրականացման արդյունքում ենթատարածաշրջանի (Բոսնիա և Հերցեգովինա և հարակից շրջաններ) անվտանգությունը կառուցվում է կողմերի ուժերի հավասարակշռության հիման վրա, որոնք դեռևս բավականաչափ չեն համագործակցում միմյանց հետ անվտանգության ոլորտում (տե՛ս *Lachowski Z., Conventional Arms Control // SIPRI Yearbook 2002: Armaments, Disarmament and International Security. Oxford University Press: Oxford, 2002, pp. 718-723.*)

նիվ, անգամ հաշվի առնելով պայմանագրի մեխանիզմների ողջ անկատարությունը, Հարավային Կովկասի տարածաշրջանի համար այն ստեղծում է թեև շատ փուխր և անկատար, բայցևայնպես ռազմականացումը զսպելու և ռազմական ոլորտում վստահության մթնոլորտի հաստատման ինչ-որ մեխանիզմներ (տեղեկատվության կանոնավոր փոխանակում, գորավարժությունների և զինանձնակազմի ու զինատեսակների տեղաշարժի մոնիթորինգ, միջազգային տեսուչների այցելություններ և այլն):

3. ԵՄՄՊ-ից Ռուսաստանի հնարավոր հրաժարման քաղաքական հետևանքները. Հարավային Կովկասի տարածաշրջանային համատեքստը

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ Ռուսաստանը (եթե մյուս մասնակից պետություններն առաջարկված ժամկետում չվավերացնեն նորացված ԵՄՄՊ-ը, ինչը գործնականում իրատեսական չէ) արդեն 2008թ. կեսին դուրս կգա պայմանագրից: Տեսականորեն կարելի է ենթադրել, որ Ռուսաստանի դուրս գալը կարող է հանգեցնել մի իրավիճակի, երբ ԵՄՄՊ-ը, բնականաբար, այլևս չի կիրառվի նրա նկատմամբ, բայց մյուս եվրոպական պետությունները «ինքնաբերաբար» որոշ ժամանակ կհետևեն դրա դրույթներին. ասենք, մինչև այս ոլորտում միջազգային մի նոր փաստաթղթի մշակումը կամ այս ոլորտի լիազորությունները հեղինակավոր տարածաշրջանային ռազմաքաղաքական կազմակերպության (ինչպես, օրինակ, ՆԱՏՕ-ն է) ինստիտուտներին հանձնելու նախաձեռնումը: Բայց առանց Ռուսաստանի մասնակցության՝ Եվրոպայում սովորական սպառազինությունների սահմանափակման բոլոր նոր նախաձեռնությունները պակաս արդյունավետ են, երկարաժամկետ հեռանկար չունեն և իրատեսական չեն: Սակայն բոլոր դեպքերում ակնհայտ է, որ Հարավային Կովկասի երկու երկրների՝ Հայաստանի և Վրաստանի համար, անվտանգության ոլորտում քաղաքական շահերից և գերակայություններից ելնելով, շահավետ կլինեք, որ պայմանագիրը շարունակեք գործել ցանկացած պայմաններում:

Մասնավորապես, Վրաստանը շահագրգռված է պայմանագրով, քանի որ անուղղակիորեն երկրի տարածքից ռուսական ռազմակայանները դուրս բերելու հարցի շուրջ իր դիրքորոշումը փաստարկում է 1999թ. ստամբուլյան պայմանավորվածություններով, ինչպես նաև այն իբրև քաղաքական ու իրավաբանական ռեսուրս է օգտագործում Աբխազիայում ռուսական ռազմական ներկայության դեմ (Գուդաուրի ռազմակայանի հիմնախնդիրը) և այլն [10]: Մյուս կողմից՝ դեպի ՆԱՏՕ ձգտող Վրաստանի համար շատ կարևոր է ԵՄՄՊ դրույթներին հետևելը (հատկապես տեղեկատվության և տվյալների փոխանակման հարցում)՝ ԱՄՆ և եվրոպական երկրների համար անվտանգության ոլորտում ծանրակշիռ գործընկերոջ

կերպար ստեղծելու նպատակով: Սա էլ պայմանավորում է Վրաստանի տրամադրած տվյալների առանձնակի հանգամանակիությունն ըստ ԵՍՍՊ ընթացակարգերի և ՄԱԿ ռեգիստրին ներկայացրած տվյալներն ըստ կոնվենցիոնալ սպառազինությունների (համեմատության համար տե՛ս *Աղյուսակ 4, 5*): Եվ վերջապես, Ռուսաստանի համար ԵՍՍՊ գծով թևային սահմանափակումներն ինչ-որ չափով սահմանափակում են ռուսական ռազմական ներկայության չափը Վրաստանին սահմանակից Հարավկովկասյան ռազմական օկրուգում:

Աղյուսակ 4

Սպառազինությունների և ռազմական տեխնիկայի ներմուծումը Վրաստանում 2006թ. ըստ կոնվենցիոնալ սպառազինությունների գծով ՄԱԿ ռեգիստրի

Կարգը	Արտահանող երկիրը	Սպառազինության տեսակը	Քանակությունը
Տանկեր Ընդամենը	Չեխիա	T-72	35 35
ԵԲՄ	-	-	-
Հրետանային համակարգեր	Չեխիա	152մմ CAУ «Дана»	12
	Բոսնիա և Հերցեգովինա	122մմ հաուրից Ժ-30	30
		120մմ ականանետ	15
Ընդամենը			57
Մարտական ինքնաթիռներ	Վրաստան	գրոհային Су-25УБ	1
Ընդամենը			1
ա) Հրթիռներ և	ա) Ուկրաինա	3УР 9М33М3 ЗРК «Оса»-ի համար	48
	Ղազախստան	ПТУР 9М114 «Штурм»	758
	Ղազախստան	57մմ НАР С-5ПКБ	5552
	Բուլղարիա	ПТУР «Ֆագոտ»/ «Կոնկուրս»	450
բ) հրթիռանետ սարքավորումներ	բ) Ուկրաինա	ЗРК «Оса-АКМ»	1 համակարգ (մարտկոց)
Ընդամենը			ա) 6808՝ բ) 1

* Բոսնիայի և Հերցեգովինայի կողմից ՄԱԿ 2006թ. ռեգիստր ներկայացված տվյալների համաձայն՝ այդ երկիրը Վրաստանին է մատակարարել նաև 262մմ РС30 М-87 «Оркан»-ի (12 փողանի РС30, որը պատրաստվել է դեռևս 1980-ական թթ. վերջին նախկին Հարավսլավիայում, Իրաքի հետ համագործակցությամբ. այն ունի բավական բարձր հարվածող հզորություն մինչև 50կմ կրակային հեռահարությամբ) համար նախատեսված 500 հրթիռ, սակայն չի նշվել այդ РС30-ի հրթիռանետ սարքավորումները Վրաստանին մատակարարելու մասին: Սյուս կողմից Վրաստանն ինքը ՄԱԿ 2006թ. ռեգիստրին ներկայացրած իր տվյալներում ընդհանրապես որևէ տեղեկություն չի նշել Բոսնիա և Հերցեգովինայից վերոնշյալ РС30-ները գնելու մասին: Ռուսական լրատվամիջոցներն իրենց հերթին նշում են, որ ռուս դիվանագետները 2007թ. հունիսին Բոսնիա և Հերցեգովինայում կարողացել են խափանել Վրաստանին РС30 М-87 «Оркан» հրթիռանետ սարքավորումների մատակարարման գործարքը (տե՛ս *Широков А., Исламисты вооружают Грузию: Москве с трудом удалось сорвать сделку // РБК daily, 28.08.2007.*)

Աղյուսակ 5

Թեթև և հրաձգային սպառազինությունների ներմուծումը Վրաստանում 2006թ.

Կարգը	Արտահանող երկիրը	Սպառազինության տեսակը	Քանակությունը
Գնդացիներ	Ուկրաինա Չեխիա	7,62մմ PK և PKM 7,62մմ PKT*	53 35 88
Ընդամենը			
Ավտոմատներ	Ուկրաինա Ուկրաինա	7,62մմ AKM 5,45մմ AK-74	10000 11700 21700
Ընդամենը			
Ծանր գնդացիներ	Չեխիա	12,7մմ M-15*	35 35
Ընդամենը			
Ավտոմատ նռնականետեր	Ուկրաինա	30մմ AGC-17	64 64
Ընդամենը			
Ականանետեր	Բոսնիա և Հերցեգովինա Բոսնիա և Հերցեգովինա	82մմ M-69A 60մմ M-57	25 50 75
Ընդամենը			

* Չեխիայից Վրաստան արտահանվող T-72 տանկերի համալրման համար:

Հայաստանի դիքորոշումն այս հարցում այն է, որ Հարավային Կովկասի ռազմականացումը զսպելու գործում ԵՄՍՊ մեխանիզմների իրական արդյունավետության առնչությամբ կասկածներ արտահայտելով հանդերձ՝ կողմ է դրա պահպանմանը, քանի որ պայմանագիրը, այնուամենայնիվ, հանդես է գալիս որպես սպառազինությունների տարածաշրջանային մրցավազքի զսպման որոշակի մեխանիզմ [11]: Չնայած Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերություններին, ԵՄՍՊ-ից Մոսկվայի դուրս գալը չի համապատասխանում Հայաստանի շահերին: Պայմանագրից Ռուսաստանի լրիվ դուրս գալու (2008թ. կեսերին) պարագայում անգամ, եթե գտնվեն էլ արևմտյան երկրների կողմից պայմանագիրն արդիականացնելու կամ դրա «կյանքը երկարաձգելու» ինչ-որ մեխանիզմներ, Հայաստանը, ամենայն հավանականությամբ, կփորձի պահպանել դրան իր անդամակցությունը: Մակայն բնական է, որ այս ամենը Հայաստանի համար նշանակություն կունենա միայն այն դեպքում, եթե Ադրբեջանը նույնպես կատարի պայմանագրի դրույթները, ինչն, ի դեպ, կասկածելի է:

Սկզբունքորեն, տարածաշրջանի միակ երկիրը, որն իրականում շահագրգռված է ԵՄՍՊ խարխլմամբ, Ադրբեջանն է, որն ակտիվորեն սպառազինվում է և ամենաբարձր մակարդակով հայտարարում է Ղարաբաղյան հիմնախնդիրը ռազմական ճանապարհով լուծելու անհրաժեշտության մա-

սին: Փորձագետների միանշանակ գնահատմամբ՝ Ադրբեջանն անմիջապես կօգտագործի պայմանագրից Ռուսաստանի դուրս գալը՝ չվերահսկվող, անսահմանափակ սպառազինում սկսելու և սպառազինությունների մրցավազքին նոր թափ հաղորդելու համար: Ըստ ադրբեջանցի ռազմական փորձագետների՝ «դա լավ քայլ է Ադրբեջանի համար. քանի որ մենք պատրաստվում ենք ավելացնել սպառազինությունները, ապա Ռուսաստանի դուրս գալը միայն արձակում է մեր ձեռքերը: Այժմ անհրաժեշտ է, որ մեր իշխանությունները փոխզիջման չգնան այն ուժերի հետ, որոնք կստիպեն մեզ մնալ ԵՍՍՊ սահմանաչափի մեջ» [12]: Նախնական տվյալներով՝ արդեն 2007թ. ընթացքում միայն Ուկրաինայից այդ երկիրը լրացուցիչ գնել է 122մմ-ոց 60 հատ *Ա-30А* հատիքից և 13 հազար արկ դրանց համար, 20 *БТP-70*, 145 հրթիռ 300մմ-ոց *РС30 9А52 «Смерч»-ի* համար, 50 *ИТУР* (հակատանկային կառավարվող հրթիռ) և 11 հազար Կալաշնիկովի ավտոմատ [13]:

Մինևս այն ժամանակ, որոշ փորձագետներ ենթադրում են, որ պայմանագրից Ռուսաստանի դուրս գալը կարող է հանգեցնել Հարավային Կովկասում և կոնկրետ Հայաստանում ռուսական ռազմական ներկայության որոշակի ուժեղացման՝ Հայաստանում տեղակայված 102-րդ ռուսական ռազմակայանի սպառազինությունների և ռազմական տեխնիկայի ավելացման ճանապարհով: Հիշեցնենք, որ Վրաստանում և Հայաստանում ռուսական ռազմական ներկայությունը ԵՍՍՊ շրջանակներում (1999թ. Ստամբուլի գագաթաժողովի արդյունքներով) փաստաթղթային ձևակերպում է ստացել պայմանագրով նախատեսված, այսպես կոչված, «ժամանակավոր ծավալման» ձևաչափով, որը թույլ է տալիս օտարերկրյա զորքերի տեղակայում պայմանագրի մեկ այլ մասնակցի տարածքում ոչ ավելի, քան 153 տանկ, 243 *ББМ* և 140 հրետանային համակարգ ծավալով: Ներկայումս Վրաստանի տարածքում մնացել է ընդամենը մեկ ռուսական ռազմակայան՝ 12-րդը Բաթումում, որի դուրսբերման գործընթացը շարունակվում է, և որը 2008թ. վերջին կփակվի: Ինչ վերաբերում է Հայաստանի տարածքում գտնվող ռուսական զորքերին, ապա 102-րդ ռազմակայանում գտնվող՝ պայմանագրով սահմանափակվող ռազմական տեխնիկայի քանակությունը ընդհանուր առմամբ չի գերազանցում «ժամանակավոր ծավալման» մակարդակը, իսկ տանկերի թվով, նույնիսկ հայկական բանակի տանկերի հետ միասին, չի գերազանցում երկրի ՏՄՄ-ն:

Ինչպես կարծում են փորձագետները, ռազմական գործողությունների համեմատաբար սահմանափակ «հնարավոր» թատերաբեմի պայմաններում չի էլ պահանջվում, որ Հայաստանում գտնվող ռուսական ռազմակայանը մեծ քանակությամբ ծանր տեխնիկա ունենա: Իսկ օտարերկրյա ռազմական ներկայության ընդլայնված ձևաչափը ԵՍՍՊ մասնակից պե-

տություններում՝ այսպես կոչված «արտակարգ ժամանակավոր ծավալման» ձևով (459 տանկ, 723 *BBM* և 420 հրետանային համակարգ չափով), պայմանագրի դրույթների համաձայն, չի տարածվում թևային շրջանի պետությունների (որոնց թվին է պատկանում նաև Հայաստանը) վրա: Ուստի ներկայումս գործող ԵՄՍՊ պայմաններում Հայաստանում գտնվող 102-րդ ռուսական ռազմակայանի սպառազինությունների և ռազմական տեխնիկայի քանակի ավելացման հնարավորությունը տեսականորեն քիչ հավանական է (բացի գոյություն ունեցող հնացած զինատեսակների ու տեխնիկայի պլանային նորացումից և արդիականացումից): Իրական չի թվում նաև այն իրավիճակը, որ Հայաստանը զանգվածային ձևով «կհամալրվի» ռուսական սպառազինություններով այն դեպքում, եթե ԵՄՍՊ-ից Ռուսաստանի դուրս գալուց հետո արևմտյան պետությունները որոշեն «ինտերցիայով» հետևել պայմանագրի դրույթներին (կամ էլ փորձեն ստեղծել սպառազինությունների վերահսկման նոր համանման մեխանիզմ): Եվ սա՝ ելնելով հետևյալ սահմանափակիչներից.

- իրավական ոլորտում – Հայաստանը, ըստ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչների հայտարարությունների, ավելի շուտ կփորձի շարունակել ԵՄՍՊ դրույթները կատարելը, այդ թվում և իր տարածքում օտար երկրների սպառազինությունների ու ռազմական տեխնիկայի քանակի սահմանափակման գծով: Մյուս կողմից՝ պայմանագրից Ռուսաստանի դուրս գալը կհանգեցնի նաև նրան, որ այդ երկիրը, բնականաբար, արդեն չի կարողանա կիրառել այդպես էլ չվավերացված թարմացված պայմանագրի դրույթները պայմանագրով սահմանափակվող ռազմական տեխնիկայի իր չափաբաժինները Հայաստանին հանձնելու վերաբերյալ,
- քաղաքական ոլորտում – Հայաստանը, հնարավոր է, չի ցանկանա ավելացնել ռուսական ռազմատեխնիկական ներկայությունն իր տարածքում, իսկ Ադրբեյջանը, հավանական է, ճնշում կգործադրի Ռուսաստանի վրա (հատկապես հաշվի առնելով ռուս-ադրբեյջանական ռազմաքաղաքական հարաբերություններում ռուսական կողմի համար այնպիսի կարևոր բաղադրիչ, ինչպիսին Գաբալայի ռադիոտեղորոշիչ կայանն է),
- հաղորդակցային ոլորտում – ռուս-վրացական լարված հարաբերություններից ելնելով՝ Վրաստանի տարածքով մեծ քանակությամբ ծանր ռազմատեխնիկայի Հայաստան տեղափոխումը տեսականորեն հնարավոր է, բայց բավական խնդրահարույց: Ռազմական տեխնիկայի և սպառազինությունների Հայաստան տեղափոխումը Իրանի տարածքով կամ էլ օդային տրանսպորտով նույնպես խնդրահարույց է ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական նկատառումներից ելնելով:

Եթե դիտարկենք մի այնպիսի իրավիճակ, երբ Ռուսաստանն ամբողջովին դուրս է եկել ԵՍՍՊ-ից 2008թ. հուլիսի 1-ից հետո, իսկ ՆԱՏՕ երկրները որոշել են, որ այլևս անիմաստ է միակողմանիորեն հետևել այդ պայմանագրին կամ էլ ստեղծեն Եվրոպայում, առանց Ռուսաստանի մասնակցության, սպառազինությունների վերահսկման այլընտրանքային մեխանիզմ, այդ ժամանակ Հարավային Կովկասի առնչությամբ կարելի է ասել, որ ի հայտ կգան սպառազինությունների լայնածավալ մրցավազքի ու համընդհանուր ռազմականացման բոլոր նախադրյալները: Այս պարագայում Հայաստանում ռուսական ռազմական ներկայության ավելացման (կամ հակառակը՝ կոնսերվացման) հեռանկարների դիտարկումն արդեն պետք է լինի բոլորովին այլ մակարդակում և ելնելով այլ քաղաքական պայմաններից:

**4. Տարածաշրջանային «սպառազինությունների մրցավազքի»
հավանականությունը և զսպման տարրերի դերը
Ղարաբաղյան դիմակայությունում**

Նման իրավիճակում, հնարավոր է, Հայաստանի համար միակ համեմատաբար դրական բանը կարող է լինել Դաշտավայրային Ղարաբաղի նկատմամբ ԼՂՀ վերահսկողության պահպանման անհրաժեշտության մասին փաստարկումների ուժեղացումը՝ որպես հայ-ադրբեջանական դիմակայության գոտում ռազմաքաղաքական հավասարակշռության պահպանման պայման և մարտական գործողությունները չվերսկսելու երաշխիք: Ի դեպ՝ սպառազինությունների մրցավազքը երկասյրի երևույթ է, և դժվար է ասել, թե Ադրբեջանի զինանոցում սպառազինությունների ծավալի հետագա ավելացումը (ինչը միանշանակորեն տեղի կունենա ԵՍՍՊ լուծարումից հետո) որքանով կազդի նրա հարձակողական հնարավորությունների վրա՝ Ղարաբաղյան հակամարտության գոտում ռազմական գործողությունների հավանական վերսկսման պարագայում: Չնայած Ադրբեջանի ֆինանսական մեծ հնարավորություններին և այն բանին, որ այն ավելի մեծ քանակությամբ ու թանկ հարձակողական սպառազինություն է գնում, հայկական կողմը դա կարող է փոխհատուցել ավելի էժան «հակահամակարգերով» կամ պաշտպանական սպառազինություններով, որոնք էժան են, բայց ներկայիս ճակատը պահելու խնդիրը լուծելու համար իրենց արդյունավետությամբ բոլորովին չեն զիջում Ադրբեջանի ձեռք բերածներին: Ընդ որում՝ Հայաստանը հնարավորություն ունի նաև փոխհատուցել Ադրբեջանի համեմատ իր ֆինանսական հնարավորությունների հասկանալի անհավասարությունը՝ օգտագործելով Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերությունների արտոնյալ ձևաչափը և Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամությունը:

Բացի այդ, Ադրբեջանի այդքան բացահայտ ռազմականացումը Ղարաբաղյան հարցում որոշակի քաղաքական առավելություններ է ստեղծում հայկական կողմի համար: Ադրբեջանի ռազմաշունչ հայտարարությունները Երևանին և Ստեփանակերտին առիթ են տալիս եվրոպական կառույցների և առաջատար տերությունների հետ երկխոսությունում դրանք օգտագործել որպես լրացուցիչ փաստարկ Դաշտավայրային Ղարաբաղի տարածքի նկատմամբ իրենց իրավունքները և այն հայկական կողմի վերահսկողության տակ պահելու անհրաժեշտությունը հիմնավորելիս, ինչը կայունության և ընդհանուր ռազմական հավասարակշռության պահպանման կարևոր տարր է հայ-ադրբեջանական դիմակայությունում: Որքան բարձրաձայն է ադրբեջանական կողմը խոսում Ղարաբաղի ազատագրման նպատակով ռազմական գործողությունները շուտով սկսելու մասին, այնքան բարձր և վստահ կերպով հայկական կողմը կարող է պնդել Դաշտավայրային Ղարաբաղի տարածքների որևէ զիջման անհնարինությունը: Միջազգային հանրության համար (առավել ևս՝ Հայաստանում, ինչը, գուցե, նույնիսկ ավելի կարևոր է) փաստարկումը ավելի քան համոզիչ է հնչում. քանի որ տարածքների հանձնումը կարող է փոխել ռազմական հավասարակշռությունը, և Ադրբեջանը, գայթակղվելով, իսկապես կսկսի ռազմական գործողություններ, ուրեմն մանավանդ համաշխարհային հանրության շահերից է բխում այդ տարածքները հայկական վերահսկողության տակ պահելը՝ որպես Ադրբեջանի կողմից պատերազմը չվերսկսելու և տարածաշրջանային կայունությունն ու անվտանգությունը պահպանելու ամենագործունե քաղաքական քայլ:

Մյուս կողմից՝ հայ-ադրբեջանական դիմակայության գոտում սպառազինությունների մրցավազքի հերթական արժարժամբ ստեղծվում է, հնարավոր է՝ տարօրինակ հնչող, բայց միևնույն ժամանակ դեռևս սառը պատերազմի տարիներից լավ հայտնի և քաղաքագիտության մեջ լայնորեն ուսումնասիրված՝ ռազմական գործողություններն սկսելու հավանականության նվազման իրավիճակ: Ուժի մեջ է մտնում, այսպես կոչված, փոխադարձ զսպման մեխանիզմը, երբ հակամարտող կողմերի ռազմական պոտենցիալների ոչնչացնող մեծ ուժի պատճառով ռազմական գործողություններն սկսող երկրի համար մարտական գործողություններն սկսելուց ստացած ցանկացած օգուտ չի կարող արդարացնել իր կրած մարդկային և նյութական վնասները, էլ չենք խոսում նրա համար, միջազգային հանրության բացասական արձագանքի արդյունքում, քաղաքական հետևանքների մասին: Ռազմաստրատեգիական հետազոտությունների շրջանակներում լայնորեն տարածված տեսությունների համաձայն, որոնք ապացուցվել են միջազգային և տարածաշրջանային անվտանգության պահպանման վեր-

ջին մի քանի տասնամյակների փորձով, զսպում ասելով հասկացվում է մեկ կողմի (որը սովորաբար քանակական առումով զիջում է իր ուժային պոտենցիալով) նկատմամբ մյուսի անցանկալի (ռազմական կամ քաղաքական) գործողությունների կանխումը՝ նրան անհանդուրժելի վնաս հասցնելու սպառնալիքի միջոցով [14]:

Իրավիճակն, անշուշտ, նոր չէ, այն որոշակի աստիճանով արձանագրում է սառը պատերազմի և գերտերությունների երկբևեռ դիմակայության ժամանակների ավանդույթները, բայց այն ժամանակ խոսքը վերաբերում էր միջուկային զենքի զսպիչ ներուժին: Այս դեպքում խոսքը կարող է վերաբերվել սովորական սպառազինություններով կոնվենցիոնալ զսպմանը, սակայն հարկ է նկատի ունենալ, որ սպառազինությունների մրցավազքի արդյունքում կողմերի (և՛ հայկական, և՛ ադրբեջանական) ռազմական ներուժը զգալիորեն ավելացել է և չի կարող համեմատվել 13-ամյա վաղեմության ռազմական գործողությունների ժամանակաշրջանի հետ: Մանավանդ որ կողմերի ունեցած սպառազինությունների որոշ համակարգեր (օրինակ՝ *РС30-«Смерч»*-ը ադրբեջանցիների և «Թայֆուն»-ը՝ հայերի մոտ) իրենց հարվածային հատկություններով ընդհուպ մոտենում են տակտիկական միջուկային զենքին: Ուստի, շատ մեծ է այն բանի հնարավորությունը, որ մարտական գործողությունների վերսկսման պարագայում առաջին իսկ օրերին հակամարտող կողմերի զինված ուժերի անձնակազմի և խաղաղ բնակչության մեջ զոհերի թիվը կարող է հասնել ոչ թե հազարների, այլ տասնյակ հազարների: Մանավանդ որ ռազմատեխնիկական տեսակետից Ղարաբաղում ադրբեջանական արագ «բլիցկրիգի» համար որևէ հիմք չկա, ավելի շուտ՝ հակառակը. հակամարտության գոտում մարտական գործողությունների վերսկսման դեպքում դրանք, հավանական է, կընթանան 1980-1988թթ. իրանա-իրաքյան երկարատև «խրամատային» պատերազմի սցենարով:

Այսպիսով, որքան էլ տարօրինակ հնչի, Ղարաբաղյան հակամարտության գոտում սպառազինությունների փոխադարձ մրցավազքը տվյալ փուլում իրականում միայն բարձրացնում է մարտական գործողությունների սկսման շեմը (կամ նվազեցնում է դրա հավանականությունը): Մա, իհարկե, մարտական գործողությունները չվերսկսելու լիարժեք երաշխիք հանդիսանալ չի կարող, բայց լուրջ սահմանափակումներ է ստեղծում մարտական գործողությունների վերսկսումը հրահրող պետության համար: Ադրբեջանը շարունակում է գնել թանկարժեք սպառազինություններ և ռազմական տեխնիկա, ինչն իսկապես կարող է ինչ-որ չափով փոխել ռազմական հավասարակշռությունը ոչ հօգուտ Հայաստանի և Ղարաբաղի: Բայց կայունությունը հակամարտության գոտում կպահպանի ստեղծվող արդեն նոր հավասարակշռությունը (այն կարելի է անվանել «սպառնալիքների հավասար-

րակշռություն»), որը ստիպում է կողմերին չխախտել այդ փխրուն խաղաղությունը դեռևս երկար ժամանակ:

Նման պայմաններում, եթե հակամարտող կողմը հաստատ համոզված է, որ Ղարաբաղում մարտական գործողությունների ցանկացած ելքի դեպքում նրա կրած կորուստները կկազմեն տասնյակ հազարավոր զոհված մարդիկ և ահռելի նյութական վնասներ, նա երկար ու լավ կմտածի, նման սպառնալիքների պարագայում, հակամարտությունը վերսկսելու որոշում կայացնելուց առաջ:

Եվ վերջապես, արևմտյան երկրների ավելացող, կարելի է ասել՝ նույնիսկ ինստիտուցիոնալ ներգրավվածությունը և նրանց շահագրգռությունը էներգետիկական ու հաղորդակցային նախագծերի կայուն աշխատանքին աջակցելու գործում առավել կանխատեսելի են դարձնում տարածաշրջանային քաղաքական գործընթացները, նպաստում են Հարավային Կովկասում «կայուն վտանգավորության» իրավիճակի պահպանմանը և խոչընդոտում են մարտական գործողությունների վերսկսմանը տարածաշրջանում:

Հոկտեմբեր, 2007թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Peters J.E.*, The Changing Quality of Stability in Europe: The Conventional Forces in Europe Treaty Toward 2001. Santa-Monica: RAND, 2000; *Агрян В.*, Договор об обычных вооруженных силах в Европе: позиции России и Запада в отношении фланговых ограничений // Южный Кавказ: Проблемы региональной безопасности и интеграции, т.1, #1, Ереван, РАУ, 2004.
2. *Федоров Ю.*, Адаптированный ДОВСЕ и интересы безопасности России // Ядерный контроль, т.10, # 4 (74), 2004.
3. *Бужинский Е.*, Последний довод России: об итогах чрезвычайной конференции государств-участниц ДОВСЕ // Военно-промышленный курьер, #25 (191), 04-10.07.2007.
4. *Храмчихин А.*, Копья ломать не стоит: почему ДОВСЕ выгоден России? // Независимое военное обозрение, 31.08.2007.
5. *Кафка А.*, Некоторые проблемы взаимодействия России и европейских международных организаций в области контроля над обычными вооружениями // Россия и основные институты безопасности в Европе: вступая в XXI век, М., 2000.
6. *Минасян С.*, Военно-технические аспекты региональной безопасности и проблемы контроля над вооружениями на Южном Кавказе // Регион, #2 (6), Ереван, НОФ «Нораванк», 2006.
7. UN Register of Conventional Arms, (http://disarmament.un.org/UN_REGISTER.nsf).

8. *Юнусов А.*, Азербайджан: в ожидании перемен под бременем истории // Кавказ: вооружен и разобщен, Saferworld, ЦАСТ: Лондон – Москва, февраль 2004.
9. *Lachowski Z.*, Arms Control in the Caucasus // Armament and Disarmament in the Caucasus and Central Asia. SIPRI: Stockholm, 2003.
10. *Blank S.*, The CFE Treaty Moratorium and Its Impact on the Caucasus' Frozen Conflicts // Central Asia – Caucasus Analyst, Vol. 9, #15, 25.07.2007, (<http://www.cacianalyst.org/newsite/?q=node/4667>).
11. Армения заявляет о готовности обсуждать проблемы по ДОВСЕ со всеми заинтересованными странами // ИФ Интерфакс, 17.07.2007, (http://www.interfax.ru/r/V/sng/14.html?id_issue=11791926).
12. *Мамедов Дж.*, Азербайджан: игра военными мускулами // IWPR, №402, 23.07.2007, (http://www.iwpr.net/?arc_state=henfcrs337254&l=ru&s=f&o=337254).
13. *Микаелян Л.*, Украина не вмешивается в конфликты? // Голос Армении, 27.09.2007.
14. *Минасян С.*, «Гонка вооружений» и формирующийся «баланс угроз» в зоне карабахского конфликта // <http://www.noravank.am/ru/?page=analitics&nid=765>, 02.07.2007.

РОССИЯ, ДОВСЕ И БЕЗОПАСНОСТЬ ЮЖНОГО КАВКАЗА

Сергей Минасян

Резюме

Приостановка 14 июля 2007г. президентом РФ В.Путиным выполнения Россией положений (ДОВСЕ) и связанных с ним некоторых соглашений и протоколов создает новую ситуацию в сфере контроля над вооружениями в Европе. Хотя, по заявлениям российской стороны, формально основным условием таких действий Москвы явился продолжающийся отказ от ратификации большинством стран – участниц нового адаптированного варианта ДОВСЕ, однако, как считают многие эксперты, мораторий российской стороны на выполнение действий ныне действующего ДОВСЕ следует объяснять не только желанием России удовлетворить свои формальные требования к остальным участникам по скорейшей ратификации Адаптированного ДОВСЕ, сколько общим ухудшением отношений Москвы с западными странами, а также своеобразным ответом на действия США по развертыванию новой системы ПРО в Восточной Европе.

Порядок выполнения положений ДОВСЕ государствами Южного Кавказа за последние 15 лет был весьма различен. Грузия и Армения в целом не нарушали положений Договора. Однако в случае с Азербайджаном за весь период действия ДОВСЕ были заметны явные нарушения. Более того, в течение нескольких лет Азербайджан пытался (впрочем, безуспешно) добиться увеличения своих квот по вооружениям в обход положений ДОВСЕ, а также обосновать этим факты превышения собственными вооруженными силами максимально разрешенных Договором уровней наличия вооружений. При этом надо признать, что ни «базовый» ДОВСЕ, ни его Адаптированный варианты не имеют реальных и действенных механизмов по контролю над вооружениями на Южном Кавказе, что дает Азербайджану – главному инициатору региональной милитаризации, «широкие» возможности обхода его положений. С другой стороны, политические проблемы, существующие между ведущими западными странами и Россией, также сделали этот документ заложником глобальных политических процессов. Но, тем не менее, даже с учетом всего несовершенства его механизмов, существование ДОВСЕ применительно к региону Южному Кавказа создает пусть очень хрупкие и несовершенные, но все-таки какие-то механизмы сдерживания милитаризации и налаживания мер доверия в военной сфере.

В принципе, единственной страной Южного Кавказа, которая в реальности заинтересована в полном развале ДОВСЕ, – это Азербайджан, который активно милитаризуется и на самом высоком уровне заявляет о необходимости военного решения карабахской проблемы. По однозначным оценкам экспертов, выход России из ДОВСЕ будет сразу же использован Азербайджаном для начала бесконтрольной и неограниченной милитаризации и усиления гонки вооружений.

В подобной ситуации, возможно, единственным относительным плюсом для Армении может явиться усиление ее аргументации о необходимости сохранения контроля НКР над Низинным Карабахом в качестве реального условия сохранения военно-политического баланса в зоне армяно-азербайджанского противостояния и гарантии невозобновления боевых действий.